Հաստատում եմ՝

Տնօրեն Գ.Մելիք-Ստեփանյան

2022-2023 ուսումնական տարվա

Աշխատանքային Ծրագիր

Հանրակրթական դպրոցի սովորողների

դաստիարակչական աշխատանքների

կազմակերպիչ Ս.Մայիլյան

2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը կազմվել է սովորողների

ԴԱԿ-ի աշխատանքային գործառույթների համաձայն։

Ըստ այդ ծրագրի նախատեսվում է՝

- Համագործակցել ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարների, մանկավարժների, աշակերտների և ծնողների հետ։ Համագործակցության արդյունքում իրականացնել աշխատանքներ՝ կազմակերպելու սովորողների դաստիարակչական աշխատանքները։
- Սովորողների մեջ պատշաճ վարքագիծ և վարվելակերպ ձևավորելու նպատակով՝ իրականացնել աշակերտների ամենօրյա հաշվառում, վերահսկողություն , պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ։
- Աջակցել դասղեկներին միջոցառումների կազմակերպման և իրականացման հարցում, մասնակցել ներդպրոցական օլիմպիադաների,ասմունքի և շարադրությունների մրցույթների անցկացման գործընթացին, ։
- Աջակցել դպրոցի անձնակազմին և աշակերտներին արտադպրոցական միջացառումներին ՝պատշաճ ներկայանալու հարցում։
- Պահպանելով ուսումնական հաստատության կանոնադրությամբ ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները՝ կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ։
- Համագործակցել դպրոցի աշակերտական խորհրդի հետ՝ իրականացնելով ծրագրեր, վիկտորինաներ, սեմինար-քննարկումներ, միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովմանն ու դպրոցական ինքնավարությանը։ Ուսումնական տարվա ընթացքում ԱԽ-ի նախագահին աջակցել իր լիազորությունների իրականացման հարցում, մասնակցել ամեն ամիս հրավիրվող նիստերին և քննարկումներին, հանձնախմբի անդամների հետ կազմակերպել մրցույթներ, սեմինարներ, հայտնի մարդկանց նվիրված ցերեկույթներ, հանդիպումներ։
- Հաշվի առնելով արդի պահանջներն ու մարտահրավերները՝ ուսումնական տարվա ընթացքում իրականացնել ծրագիր՝ <<Մասնագիտական կողմնորոշում>> խորագրով։ Ծրագրի իրականացման ընթացքում համագործակցել դպրոցի տնօրենության, ուսուցիչների, աշակերտների և հոգեբանի հետ։ Սահմանել որոշակի ժամանակացույց և գործողությունների պլան, որոնց իրականացման արդյունքում դպրոցում սովորող 9-րդ դասարանի աշակերտները կկարողանան կողմնորոշվել մասնագիտություն ընտրելու հարցում։ Կկազմակերպվեն հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, աշակերտները կկարողանան ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները։ Արդյունքում կունենանք մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշված շրջանավարտներ։ Ծրագրի ավարտին կիրականացվի ամփոփում։

2022-2023 ուսումնական տարում իրականացվող աշխատանքների ժամանակացույց

N	**Աշխատանքի բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Պատասխանատու**
1	Մասնակցել նոր ուսումնական տարվա համար դասասենյակների պատրաստման գործընթացին	Օգոստոս	ԴԱԿ Տնտեսական գծով փոխտնօրեն
2	Մասնակցել դպրոցում իրականացվող հերթապահությանը	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱ
3	1-ին դասարանցիների ընդունելություն կազմակերպում	Օգոստոսի 31	ԴԱԿ ՄԿԱ Դասվարներ
4	Նոր ուսումնական տարում սովորողների պատշաճ ընդունելություն	Սեպտեմբերի 1	ԴԱԿ ՄԿԱ
5	Կազմել դպրոցի սոցիալապես անապահով աշակերտների ցուցակ	Սեպտեմբեր	ԴԱԿ ՄԿԱ
6	Լռության րոպե(Ծաղկեդրում)	27.09.2021թ.	ԴԱԿ ՄԿԱ
7	ՀՀ անկախության օրվա կապակցությամբ կազմակերպել դաս-միջոցառումներ	Սեպտեմբեր	Զինղեկ ԴԱԿ ՄԿԱ Դասղեկներ
8	ԱԽ-ի աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում	Սեպտեմբեր	ԴԱԿ
9	Կազմակերպել դասարաններում դասարանական խորհուրդների ընտրություններ	Սեպտեմբեր	ԴԱԿ
10	Կազմակերպել ԱԽ-ի առաջին նիստը	Սեպտեմբեր	ԴԱԿ ՄԿԱ
11	Կազմակերպել ԱԽ-ի նախագահի ընտրություն	Սեպտեմբեր	ԴԱԿ
12	Կազմակերպել ԱԽ-ի ամենամսյա նիստեր	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ
13	Աշակերտական հերթապահության կազմակերպում,հսկողություն (գրաֆիկների կազմում)	Յուրաքանչյուր ուսումնական օր	ԴԱԿ
14	Աջակցել յուրաքանչյուր դասարանի դասարանական խորհրդի անդամներին՝ իրենց դասընկերներին ներկայացնելու ԱԽ-ի կատարվելիք աշխատանքներն ու ձեռքբերումները	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ

15	Աջակցել հայկական բանակի հրամանատարների, Արցախի ազատագրման համար մարտնչած մարտիկների և սպաների հետ հանդիպումների կազմակերպմանը	Ուստարվա ընթացքում	Զինղեկ Փոխտնօրեններ ՄԿԱ ԴԱԿ Դասղեկներ
16	Արձանագրել դպրոցի հաջողությունները օլիմպիադաներում և արտադպրոցական մրցույթներում՝ ամփոփելով մրցույթում ունեցած հաջողությունները	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ
17	Տարրական և միջին դպրոցում կազմակերպել սպորտլանդիաներ (դպրոցական և արտադպրոցական)	Ուստարվա ընթացքում	Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ ՄԿԱ ԴԱԿ
18	5-9-րդ դասարաններում կազմակերպել և անցկացնել բանավեճեր, քննարկումներ, որոնք կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր - մշակութային մտածողության զարգացմանը	Ուստարվա ընթացքում	ԴԱԿ ՄԿԱ ԱԽ
19	Մասնակցել շնորհալի աշակերտների ստեղծագործությունների ցուցահանդեսների կազմակերպմանը	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Ուսուցիչներ
20	Մասնակցել ԿԱՊԿՈՒ աշակերտների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ ԴԱԿ Աջակցող թիմ
21	Սովորողների անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում	Ըստ անհրաժեշտության	ՄԿԱ ԴԱԿ Հոգեբան Դասղեկ-դասվարներ Ծնող
22	Համագործակցել ոստիկանության անչափահասների գործերով համապատասխան աշխատակցի հետ	Ըստ անհրաժեշտության	Հոգեբան
23	«Ոսկե աշուն» համադպրոցական միջոցառման կազմակերպում	Հոկտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ

24	Եղեռնու զարդարում	Դեկտեմբեր	ՄԿԱ ԴԱԿ ԱԽ
25	Բանակի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում	Հունվարի 28	ՄԿԱ ԴԱԿ Զինղեկ
26	Մասնակցել <<Տյառնընդառաջ>> տոնին նվիրված միջոցառման կազմակերպմանն ու իրականացմանը	Փետրվարի 13-14	ԴԱԿ ՄԿԱ
27	Թումանյանական օրեր	Փետրվարի 19	ԴԱԿ ՄԿԱ Գրադարանավար
28	Տնօրենի ղեկավարությամբ կազմակերպել ցերեկույթ՝ << Սուրբ Զատիկ>> տոնի կապակցությամբ	Ապրիլ	ԴԱԿ ՄԿԱ
29	Իրականացնել ծրագիր <<Մասնագիտական կողմնորոշում>>խորագրով	Ապրիլ	ՄԿԱ Հոգեբան
30	Կազմակերպել և ստեղծել Հայ կինոյի օրվան նվիրված անկյուն ,ինչպես նաև՝ ֆիլմդիտում	Ապրիլ 16	ԴԱԿ ԱԽ Մշակույթի հանձնախումբ
31	<<Երկիր մոլորակի օր>>	21.04.2023թ.	ԴԱԿ ՄԿԱ ԱԽ
32	Աջակցել ուսուցիչներին՝ Հայոց Եղեռնին նվիրված միջոցառումների կազմակերպման հարցում	Ապրիլ	ԴԱԿ Ուսուցիչներ ԱԽ
33	ԵԽ օրվան նվիրված միջոցառման կազմակերպում	Մայիսի 5	ԴԱԿ ՄԿԱ Ուսուցչուհիներ
34	Աջակցել մանկավարժներին առաջին դասարանցիների <<Հրաժեշտ այբբենարանին>> խորագիրը կրող միջոցառման իրականացման հարցում	Մայիս	ԴԱԿ ՄԿԱ Դասվարներ
35	Մայիսյան հաղթանակներ	09.05.2023թ	ԴԱԿ ՄԿԱ ԱԽ

ԴԱԿ՝ ---------- Ս.Մայիլյան

36	Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում /առցանց և առկա/ անցկացվող դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը	Ըստ անհրաժեշտության	ԴԱԿ ՄԿԱ
37	Ամփոփել 2022-2023ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները	Մայիս	ԴԱԿ